# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 16.12.2022Թ. ԿՆՔՎԱԾ N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/85» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻ (ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ) ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» հուլիսի 2023թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻՆԷՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Էդուարդ Ապրեսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով 2022թ. դեկտեմբերի 16-ին Կողմերի միջև կնքված N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/85» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1.1 Պատվիրատուի վերահսկման և գույքի կառավարման բաժնի № Ն/26.1/4619-2023 գրության համաձայն՝ գույքի (ապրանքանյութական արժեքների) գնահատման ծառայությունների մատուցումն ամբողջությամբ իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջացել Կողմերի միջև 2022թ. դեկտեմբերի 16-ին կնքված Պայմանագրով նախատեսված գումարն ավելացնել 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամով:

### 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով վերը նշված փաստական հանգամանքները՝ Պատվիրատուն և Կատարողը կնքեցին Համաձայնագիր N 1-ը հետևյալի մասին.

2.1 Պայմանագրի 4.1 ենթակետում՝ «1000000 (մեկ միլիոն)» բառերը փոխարինել «1100000 (մեկ միլիոն հարյուր հազար)» բառերով:

2.3 Պայմանագրի N 1 և N 2 Հավելվածներում՝ «1000000» բառը փոխարինել «1100000» բառով.

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Պայմանագրում նշված մյուս կետերը թողնել անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

3.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ձ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

_______________ Կ. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԻՆԷՔՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ ք.Երևան Կենտրոն Արգիշտի 11/8շ,26բ.
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570033845570100
ՀՎՀՀ՝ 06919097
«ԻՆԷՔՍ» ՍՊԸ տնօրեն՝

_______________ Է.Ապրեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.